

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

Ըստ քրիստոնյա հրեաների, բացի իրենցից ուրիշ ազգեր իրավունք չունեին իրենց ծարաված սրտերն ու աղքատացած հոգիները ջերմացնելու Տիրոջ՝ Փրկչի կենսավետ լույսով:

Պողոս առաքյալը փշրեց հրեական մտայնությունը և Փրկչի ազատարար լույսը՝ Ավետարանի կենսաբեր պատգամները, տարածեց աշխարհով մեկ, այսինքն՝ Հրեաստանից դուրս, հրեաներից հեռու:

Հիսուսի Ավետարանով մկրտեց հեթանոս աշխարհը, իսավարը փարատեց լույսով, տվեց հնար մոտենալու Տիրոջ քարոզած երկնքի արքայությանը:

Իսկ ի՞նչ էր քարոզում Առաքյալը հեթանոս աշխարհում, հայտնի է մեզ, Տիրոջով՝ փրկություն: Նոր Կտակարանում տեղ գտած նրա տասն և չորս թղթերը Տիրոջ վարդապետության բացատրություններն են: Քրիստոնեական վարդապետությունը առանց այդ թղթերի անհնարին է պատկերացնել:

Իրապես մեծ է եղել դերը Պողոս առաքյալի՝ Տիրոջ Փրկության Ավետարանը քարոզելու մեջ:

Այսօր էլ տակավին թարմ ու կենսունակ են նրա պատգամները:

Չէ որ նրա քարոզչության առանցքն են կազմում կյանքի օրհներգն ու խաղաղության պատվիրանը, հավատի գրավականն ու հոգևոր հովվի պաշտոնը, Քրիստոսով հաղթանակի գաղափարն ու ներողամտությունը, բարոյականության գերապատվությունն ու աղոթքի անհրաժեշտությունը, հոգևոր մարտի կարևորությունն ու անձի ազատությունը և, վերջապես, տիեզերամփոփ ու դյութական, երանելի ու խնկելի սիրո գաղափարը:

Սիրո գաղափարը՝ քրիստոնեական լույսով օծված ու օրհնված:

Սիրո գաղափարը խորն է ու հալիտեճական, անսահմանն ու անսպառ, անձնական է ու ընդհանրական, մարդկային է ու աստվածային, երկնային՝ Տիեզերական:

Քրիստոնեությունից առաջ էլ, անշուշտ, այդ գաղափարը եղել է և զարգացման իր ոլորտները ունեցել:

Քրիստոնեական հավատքով, սակայն, նոր գաղափար է առաջ գալիս— Սիրո Տիեզերական գաղափարը, որ առաքյալի օրհներգ սիրո մասում հրնչում է այսպես.

«Եթե խոսեմ մարդկանց լեզուները և հրեշտակներինը, բայց սեր չունենամ, կլինեմ մի պղինձ, որ հնչում է, կամ ինչպես՝ ծնծղաներ, որ ղողանջում են»:

Սիրո քարոզչությանը մեծ տեղ է հատկացվել Նոր Կտակարանում:

Նոր Կտակարանը ամբողջովին կարծես սիրով է շնչում՝ կարեկցանքով ու գութով:

Սիրո մի վառ օրինակ է պատմում մեզ Տերը իր երկրային կյանքում:

Մի մարդ Երուսաղեմից ճամփորդում էր Երիքով:

Ճանապարհը անապատով էր անցնում՝ լի ավազակներով, որոնք հարձակվում էին անցորդների վրա և կողոպտում: Մեր առակի մարդն էլ այդ ճանապարհով էր գնում, և նա ընկնում է ավազակների ձեռքը: Ավազակները մերկացնում են նրան, վիրավորում, կիսամահ թողնում և հեռանում: Դա մարդկային անգթության օրինակ է, մի տմարդի վարմունք: Բայց ավելի տմարդի է այն արարքը, որով պատմվում է քահանայի և ղևտացու մասին, որոնք սառը սրտով՝ առանց կարեկցության անցնում են նրա մոտով և օգնության ձեռք չեն մեկնում անկյալին:

Այստեղ է, որ պարզ է դառնում, թե ողորմած սերը ծագում է գութից, կարեկցանքից: Բարի սամարացին կարեկցում է նրան: Կարեկցության այդ զգացումը դուրս գալով սամարացու սրտից, մղում է նրան դեպի գործը. ճշմարիտ սերը գործունյա սեր է: Սամարացին ոչ միայն խոսքերով է դիմում անկյալին, այլև գործով՝ խնամում է նրան: Ճշմարիտ սերը չի տատանվում— ամեն մի րոպե ուշանալը անկյալին մահ կարող էր պատճառել: Ճշմարիտ սերը աներկյուղ է, բարի սամարացին չի վախենում անապատի ավազակներից, որ կարող էին իր վրա հարձակվել: Ճշմարիտ սերը շահ չի փնտրում —բարի սամարացին նրանից վարձ չի պահանջում:

Առակի այլաբանական բացատրությունը հետևյալն է:

Սամարացին մեր Տեր Հիսուս Քրիստոսն է, վիրավորյալը՝ մարդկությունը, ավազակները՝ մեղքը: Հիսուս երկնքից խոնարհվեց իր եղբայրների վերքերը կապելու: Նա բարձրացրեց վիրավորյալին և տարավ իր խաղաղության օթևանը՝ եկեղեցին:

Վարվեցեք ձեր կյանքում այնպես, ինչպես բարի սամարացին, և դուք ձեզ կզգաք սիրո վայելչության մեջ:

Ձեզանից ամեն ոք, սիրո այդ վառ օրինակը լսելուց հետո, ակամայից կարող է ինքն իրեն հարց տալ՝ իսկ եթե ես անապատ հավատ ունեմ, բավական չէ՞:

Ո՛չ, բավական չէ:

Պողոս առաքյալը պատասխանում է.

«... և թե ունենամ ամբողջ հավատը՝ մինչև իսկ լեռները տեղափոխելու, բայց սեր չունենամ՝ ոչինչ եմ»:

Սերը համբերող է, քաղցրանում է: Համբերող եղեք, կյանքում ամեն ինչ հեշտ ձեռք չի բերվում, ամեն ինչ դառն աշխատանքի, բայց արդար վաստակի զվարթությունն է:

Երբեք չկարծեք, որ բարի և արդար գործերը կկորչեն իզուր:

Առաքյալը քարոզում է, որ սերը չի ամբարտավանում, անիրավության վրա չի ուրախանում, ամեն բանի դիմանում և ամեն բանի հավատում: Եվ վերջապես՝ սերը չի կորչում:

Եթե մեկս մյուսին չսիրենք նույն սիրով, ինչ սիրով Քրիստոսին, մի՞թե մեր Փրկիչը ընդունելի կդարձնի մեր հավատը:

Չէ որ մեզ բոլորիս նա հավասարապես սիրեց, մեր բոլորի համար խաչվեց և ի սեր մեզ հարություն առավ և համբարձվեց:

Աղերս՝

— Ո՜վ Քրիստո՛ս Աստված իմ, ինձ հարատացրու քո շնորհներով, որ ծիլ տան արտիս երաշտ-բացվածքում սերմերը քո բարկ, որ խայտան մեկեն անարյուն արտիս երակներն անթիվ և սեր առաքեն իրենց ընթացքով:

Ինձ հարատացրու քո շնորհներով, որ գալիք բոլոր իմ գործերի մեջ ես միշտ նմանվեմ այն Սամարացուն, որ բարի կոչվեց արժանավայել: